

ԱՌԱՔԻՆՈՒԹԻՒՆ

Թէեւ Քրիստոսէ առաջ բնական ու գրական օրէնքով շատերը հաճոյացան Աստուծոյ, սակայն ոչ՝ առանց Քրիստոսի շնորհքին, որովհետեւ կը հաւատային գալիք Մեսիային՝ ըստ այնմ «Ձեր հայրը Աբրահամ ցանկացաւ իմ հայրս տեսնել ու տեսաւ եւ ուրախացաւ» (Յովհ. 8.53-59): Եւ թէ՛ «Քանզի ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, թէ շատ մարգարէներ եւ արդարներ փափաքեցան ձեր տեսածները տեսնել ու չտեսան եւ ձեր լսածները լսել՝ ու չլսեցին» (Մատթ. 13.17):

Մարդիկ ունին իմացական բնութիւն, իմացական միտք, որ կը փնտռէ ապաստան մը՝ որուն ապաւինի ու հանգիստը գտնէ, երբ վարանած կը տարակուսի ու կը տանջուի այն բաներուն պատճառով, որոնց կարող չէ բնականապէս հասնիլ եւ գանոնք պարզ ու յստակ ըմբռնել:

Որովհետեւ իմացականութեան յատկութիւն է իմանալ բան մը, որ բնականէն վեր է եւ աս է որ հաւատքը կ'ուսուցանէ: Ապա թէ՛ ոչ՝ մարդը կ'ըլլայ աւելի անարգ, քան անբան կենդանիները, որոնք մարդոցմէ աւելի կը զգան բնական բաները ու ասոնց ազդեցութիւնները եւ գիտեն կառավարուիլ իրենց բնութեամբ: Շատերը միայն գիտեն, թէ իրենք քրիստոնեայ են, բայց չունին քրիստոնէական հաւատքի եւ ուղղափառ վարդապետութեան հարկաւոր գիտելիքները: Ուստի հաւատքի ու հաւատքին վերաբերող: **ՇԱՐՈՒՆԱԿԵԼԻ**

ԿՐՕՆԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

ՈԳԻՆԵՐԸ, ԳԵՒԵՐԸ, ՉԱՐ ՈՒԺԵՐԸ՝ ՀՈԳԵՒՈՐ ԳԻՏԱՆԿԻՒՆԵՆ

ԽԱՂԱԹՈՒՂԹՈՎ ԳՈՒՇԱԿՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԱՆՈՐ ՀԵՏԵԱՆՔՆԵՐԸ


Հաւատացեալ կնոջ մը վկայութիւնը:

Ինչ ահաւոր է, երբ ամբողջ կեանքդ Սատանային շղթաներով կապուած կ'անցնես: Մեր կեանքը ուրիշ հունով կ'ընթանայ, երբ կը վստահինք Աստուծոյ, եւ անիկա մեր բարի հովիւը կը դառնայ: Այդ պարագային կ'ապրինք այն՝ ինչ որ կը բացագանչէ 23-րդ Մաղմոսը. «Տէ՛րն է հովիւս: Կը հողայ պէտքերս, դալար արօտավայրերուն մէջ կը հանգչեցնէ զիս, եւ հանգստարար ջուրերու ափին կը սնուցանէ: Կը վերանորոգէ զիս եւ ուղիղ ճամբաներէ կ'առաջնորդէ, որպէսզի իր անունը փառաւորուի»: Մաղմոսին մէջ ըսուած է՝ Աստուած կը հանգստացնէ եւ կը նորոգէ իմ հոգիս, իսկ այդ կնոջ նամակին մէջ կը կարդանք. «Սատանան կը վախցնէ ու կը տանջէ զիս»: Թող լսեն բոլոր անոնք, որոնք գուշակութեամբ կը զբաղին, կամ անոնց նմաններուն կը դիմեն:

Մերձպալթեան երկիրներէն եղբայր մը կը գրէ. «Այստեղ շատեր կան, որոնք կախարդութեան մեղքին մէջ թաղուած են եւ չեն գիտակցիր, որ ատիկա գարշելի Աստուծոյ աչքին: Վերջերս կը գրուցէի կնոջ մը հետ, որ ինքզինք ճշմարիտ հաւատացեալ կը համարէր: Իրեն կարելի էր հանդիպիլ ամէն տեղ՝ ուր Աստուծոյ խօսքը կը քարոզուէր: Բայց, այդուհանդերձ, Աստուծոյ աչքին բռնաւ ալ առանձնապատուկ դիրք մը չունի:... **ՇԱՐՈՒՆԱԿԵԼԻ**



ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐՈՂԱՐԱՆ ԼԻՔԱՆԱՆԻ



ԲՈՒ ԽՕՍԵՂ ԽՄ ՈՏԵՐՈՂՄ ԵՆԱԳ Է ՈՒ ԽՄ ՇԱԽՂՆԵՐՈՂՄ ԼՈՅՍ (Ս., 119-105)

Ե. ՏԱՐԻ ԿԻՐԱԿԻ՝ 30 ՍԵՊՏԵՄԲԵՐ, 2012 ԹԻՒ 40

ՅԻՍՈՒՍ ԳՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՄՄՏԹԷՈՍԻ 24.30-36

ՎԱՐԱԳԱՅ ՍՐԲՈՅ ԽԱՉԻՆ

Ապա մարդու Որդիին նշանը պիտի երեւի երկինքի մէջ եւ աշխարհի բոլոր ժողովուրդները պիտի ողբան, երբ տեսնեն մարդու Որդին, որ կու գայ երկինքի ամպերուն վրայ բազմած գօրութեամբ եւ մեծ փառով: Երբ մեծաւայն փողը հնչէ, ան իր հրեշտակները պիտի դրկէ, որպէսզի հաւաքեն իր ընտրեալները աշխարհի չորս կողմերէն, երկինքի մէկ ծայրէն մինչեւ միւսը: Թ՛գեմին թող ձեզի օրինակ ըլլայ: Երբ տեսնէք, որ անոր նիւթերը կը կալուղնան եւ տերեւ կ'արձակեն, գիտէք թէ ամառը մօտ է: Նոյնպէս ալ, երբ բոլոր ըսածներս կատարուին, գիտցէք թէ մարդու Որդիին գալուստը մօտ է: Վստահ եղէ՛ք, որ այս սերունդը չանցած՝ ասոնք բոլորը պիտի պատահին: Նոյնիսկ եթէ երկինքն ու երկիրը անհետանան, խօսքերս պիտի չանհետանան:

Սակայն ո՛չ ոք գիտէ թէ ե՛րբ պիտի գայ այդ օրը կամ ժամը. ո՛չ երկինքի հրեշտակները, ո՛չ իսկ Որդին, բայց՝ միայն Հայրը:

Ո՛չ ոք գիտէ թէ ե՛րբ պիտի գայ այդ օրը կամ ժամը. ո՛չ երկինքի հրեշտակները, ո՛չ իսկ Որդին, բայց՝ միայն Հայրը:

Մեզմէ կը պահանջուի սիրելի հաւատացեալ ընթերցող արթուն եւ պատրաստ ըլլալ ինչպէս Յիսուս կ'ըսէ: Արթուն եւ պատրաստ ըլլալ հոգիով, աղօթքի նամբով: Ամէնօրեայ աղօթքը կարեւոր անհրաժեշտութիւն է, հոգեւոր սնունդ է ինչպէս մեր մարմինը նիւթական սնունդի կարիքը ունի, նոյնպէս մեր հոգին հոգեւոր սնունդի՝ հացի կարիքը ունի: Ամէնօրեայ աղօթքն է այդ հոգեւոր հացը, որուն միջոցաւ մեր հաւատքը կը զօրանայ եւ այն ատեն մենք արթուն եւ պատրաստ պիտի ըլլանք դիմաւորելու Տէրը:

ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

ՎԱՐԱԳԱՅ ՍՈՒՐԲ ԽԱՉ

Ըստ եկեղեցւոյ աւանդութեան սուրբ Հռիփսիմեանց կոյսերը Դիոկղետիանոս (243-31) կայսեր կողմէ կը հայրածուին, կու գան Հայաստան եւ կ'ապաստանին Վարագայ լեռան լանջին: Սուրբ Հռիփսիմէ իր վիզին կը կրէր Քրիստոսի խաչափայտէն մասունք մը որ ստացած էր ժառանգարար Կլավտիոս կայսեր տիկնոջ՝ Պատրոնիկէ թագուհիին կողմէ:

Հայաստանի մէջ Հռիփսիմեանց կոյսերը հայրածանքի կ'ենթարկուին եւ այդ պատճառով ալ Սուրբ Հռիփսիմէն իր խաչը կը պահէ Վարագայ լեռան մէկ քարայրին մէջ: Հայաստանի մէջ միշտ գիտէին թէ այդ խաչը պահուած է Վարագայ լեռան վրայ, բայց չէին գիտեր թէ ուր:

653 թուին այդ լեռան վրայ իրենց ճգնութիւնը կ'ընեն Թողրիկ ճգնաւորը եւ իր աշակերտ՝ Հովելը, օրն ի բուն աղօթելով եւ խնդրելով Աստուծոյ որ ձեւով մը Աստուած իրենց յայտնէ Խաչին վայրը: Հայր Աստուած, միշտ կ'ուզէ զինք հաւատացողներուն խնդրանքները իրականացնել: Օր մը լոյսի տեսիլքով 12 սիւներու մէջտեղէն վեր կ'անջատուի Սուրբ Նշանը՝ խաչը եւ կու գայ դէպի սուրբ խորանը, ուր կ'աղօթէին երկու ճգնաւորները: Նոյն ատեն կը լսուի ձայն մը որ կ'ըսէ «Քրիստոս հաճեցաւ բնակիլ Սուրբ Խաչին մէջ, ի պահպանութիւն եւ փրկութիւն հայոց աշխարհին»:

Լուսեղէն սիւները 12 օրեր շարունակ կ'երեւին Վարագայ լեռան Գալիլիա կոչուող գագաթին վրայ, այնպէս մը որ ամէն մարդ կրնար տեսնել գանոնք:

Հոգեւորականներ եւ իշխաններ, հայոց Ներսէս Գ. Տայեցի կաթողիկոսի եւ Ռշտունեաց Վարդ Ռշտունի սպարապետի գլխաւորութեամբ կու գան

Վարագ սուրբ Խաչին երկրպագելու: Ներսէս հայրապետը սուրբ Խաչի երեւումը տօն կը հռչակէ, 12 լուսեղէն սիւներու երեւցած տեղը եկեղեցի կը շինէ, եւ ուր որ իջած էր սուրբ Խաչը կը մեծցնէ եւ աւելի փառաւոր կը կառուցէ: Այս առիթով կը գրուի նաեւ «Նշանաւ ամենայաղթ խաչիւղքով Քրիստոս» շարականը եւ մինչեւ Վարագայ սուրբ խաչի տօնը կը սահմանուի 5 օրեայ շաբաթապահք, որ ժողովրդական լեզուով կը կոչուի «Վանեցիներ»:

Վարագայ լեռան գագաթին եւ ստորոտին կը հիմնուին վերին եւ ներքին եկեղեցիները, որոնցմէ աւելի ծանօթ է Ներքին Վարագավանքը, ուր ալ կը պահուէր խաչափայտի մասունքը մինչեւ 1021: Երբ Սենեքերիմ Արծրունի Վասպուրականի թագաւորութիւնը կը յանձնէ Բիւզանդիոնի, կը տեղափոխուի Սեբաստիա եւ իր հետ կը տանի նաեւ սուրբ Նշանը սակայն քիչ ետք 1026-ին սուրբ Նշանը կը վերադարձուի Ներքին Վարագավանք: 11-րդ դարուն, Աշոտ Դ. Բագրատունի սուրբ Նշանին համար շինել կու տայ ոսկեայ տուփ մը եւ 1237-ին կը տեղափոխուի նոր Վարագավանք: Ասկէ ետք 1651-ին կը տարուի Խոշար, 1655-ին կը դրուի Վանի սուրբ Տիրամայր եկեղեցւոյ մէջ, որուն պատճառաւ ալ եկեղեցին կը վերանուանուի Սուրբ Նշան անուամբ: Մաղաքիա Օրմանեան պատրիարքը (1841-1918) իր «Ծիսական բառարան»ին մէջ կը վկայէ, որ իր օրով սուրբ խաչը տակաւին կը մնար վանի Սուրբ Նշան եկեղեցւոյ մէջ, սակայն մեծ եղեւնին ետք անոր գտնուած վայրը անյայտ է:

Սուրբ Խաչին կը վերագրուին բազմաթիւ հրաշքներ, մանաւանդ Եղեսիոյ համաճարակի ժամանակ, երբ Վարագայ Սուրբ Խաչի գօրութեամբ կանգ առած է համաճարակը:

Ագաթանգեղոսի վկայութեամբ, հայոց երկնակամարին վրայ լուսեղէն սուրբ խաչը երեւցած է նաեւ սուրբ Գրիգոր Լուսաւորչի, ինչպէս նաեւ սուրբ Մեսրոպ Մաշտոցի յուղարկաւորութեան ժամանակ Վարդապատէն մինչեւ Օշական, ըստ Մովսէս Խորենացիի վկայութեան:

ՃԱՆՉՆԱՆՔ ՄԵՐ ԵԿԵՂԵՑԻՆ

ՄԵՐ ՀԱՅՐԵՐՈՒՆ ԽՐԱՏՆԵՐԸ ԱՏԵԼՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Ատեւոթիւնը ըլլալով բոլոր մեղքերուն սկիզբը ու պատճառը, այդ ատեւոթեանն ու նախանձնն ծնաւ Բեմը եւ ոխը, իսկ ոխակալութեանն ծնաւ նենգելը, խաբելն ու սուտ խօսիլը: Արդարեւ, ան խաբեց եղբայրը որ դաշտ երթան գրօնելու, բայց անխիղճօրէն եւ անողորմ սրտով ու գազաններու կատղած բարբով սպաննեց զայն: Եւ որովհետեւ եօթը մեծ մեղքեր գործեց, Աստուած եօթը մեծ պատուհաս ու պատիժ դրաւ անոր վրայ: Աստուած եւ կայէնի եօթը մեղքերը:—

ա.— Աստուծոյ որպէս նուէր իր պրտուղներէն ու բերքէն վատն ու անպէտքը խորշակահարները տարաւ, որոնց չհանցաւ Աստուած:

բ.— Երկրորդ մեղքը այն է որ նախանձեցաւ եղբոր եւ ստեց զայն, որովհետեւ ան իր ամենէն ընտիր ու լաւ գառնուկը Աստուծոյ նուէր տուաւ:

գ.— Եղբայրը նենգութեամբ խաբեց, դ.— Սպաննութիւն գործեց,

ե.— Առաջին սպաննողը եղաւ՝ չար օրինակ դառնալով աշխարհին:

զ.— Իր եղբայրը սպաննեց:

է.— Աստուած երբ հարցուց, թէ՛ «Կայէ՛ն, ո՞ր է եղբայրդ», ան ստեց ու ըսաւ. «Ձեմ գիտեր»: Աստուած հարցուց որպէսզի գոջալով մեղայ ըսէր, մինչեւ ան լրբութեամբ պատասխանեց. «Միթէ եղբորս պահապանն եմ»: Աստուած ըսաւ. Պահապանը չես, իսկ ինչո՞ւ սպաննողը եղար: Եւ Աստուած եօթը պատիժ դրկեց անոր վրայ Աստուած ըսաւ.

ա.— Անիծեալ եղիք երկրին վրայ, ուր եղբորդ արիւնը հոսեցաւ:

բ.— Աշխատանքով ու յոգնութեամբ պիտի վարես երկիրը:

գ.— Հողը Բեգի պիտի չտայ իր գօրութիւնը՝ պտուղն ու բերքը, որովհետեւ անմեղին արիւնով ներկեցիր զայն:

Շարունակելի

ՀՈԳԵՒՈՐ ԽՈՐՀՐԳԱՏՈՒ

ՎՍԱՀԻՆՔ ՈՐՊԷՍՉԻ ՉՎԱԽՆԱՆՔ

Մեր Տէրը Յիսուս Քրիստոս կը սպասէ որ միշտ բացարձակ վստահութիւն ունենանք իր նկատմամբ: Հաւատացեալները երկու խումբի կը բաժնուին: Ոմանք միշտ Աստուծոյ կը վստահին, իսկ ուրիշներ փորձութիւններու հանդիպելէ ետք կը սկսին Աստուծոյ վստահիլ եւ յուսալ: Պէտք է Աստուծոյ վստահի՞մք որպէսզի չվախնանք, թէ պէտք է վախնանք որպէսզի Աստուծոյ վստահիմք: Երբ աշակերտները փոթորիկի հանդիպեցան ծովուն վրայ՝ Յիսուս անոնց մօտ չտեսաւ իր ակնկալած վստահութիւնը իր նկատմամբ: Անոնք հրաշքը տեսնելէ ետք միայն վստահեցան իրեն: Ան յանդիմանեց զիրենք իրենց վստահութեան պակասին համար: Փորձութիւններ պէտք չէ պատճառ ըլլան, որ խախտի մեր վստահութիւնը Աստուծոյ հանդէպ:

ԽԱՂԱՂ ԿԵԱՆՔ ԽՆԴՐԵԼՈՒ ԱՂՕԹՔ

Կեանքի առաջնորդող եւ խաղաղութիւն պարգեւող մեր Աստուածը, Քրիստոս, դուն առաջնորդէ՛ մեզ, որպէսզի արդարութեան քու ողորմութեամբ խաղաղութեամբ հասնինք կեանքի եւ փրկութեան նաւահանգիստը. որովհետեւ դուն ես մեր օգնականն ու փրկիչը: Քեզի՛ կը վայելեն փառքը, իշխանութիւնն ու պատիւը, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

ԱՌԱԿԱՑ ԳԻՐՔԷՆ

3.18-26

Իմաստութիւնը կեանքով կը վարձատրէ իրեն ապաւինողները եւ ապահովութիւն կու տայ անոնց՝ որոնք իրեն կը կոթնին՝ որպէս Տիրոջ:

Իր իմաստութեամբ էր, որ Աստուած երկրին հիմերը դրաւ, գիտութեամբ հաստատեց երկինքները: Իր համաբարով է, որ երկրի ընդերքներէն ջուրերը կը ժայթքեն եւ ամպերը անձրեւ կը թափեն: Որդեակ, իմաստութեանէն մի՛ բաժնուիք բնաւ. խրատներուս եւ խորհուրդներուս հետեւէ՛, որպէսզի կեանք ունենաս, շնորհներով զարդարուիս, մարմինդ առողջ մնայ եւ ոսկորներդ հանգրտանան, որպէսզի խաղաղ ըլլայ քու կեանքդ եւ ապահով ընթանաս, առանց երբեք գայթելու. ցերեկը անվախ նստիս եւ գիշերը քաղցր նիւնջով քնանաս:

Ուստի մի՛ վախնար գալիք փորձանքներէն, ո՛չ ալ ամբարիշտներու յարձակումներէն. որովհետեւ ամենուրէ՛ք Տէրը հետդ պիտի ըլլայ եւ պիտի պաշտպանէ քեզ որոգայթներէն:

**Շարունակել
Աստուածաշունչէն**

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ՆԱՄԱԿԸ

ԳԱՐԱՏԱՑԻՆԵՐՈՒՆ

6.14-18

Գալով ինծի, քաւ լիցի որ մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի խաչէն գատ ուրիշ բանով պարծենամ: Այդ խաչին միջոցաւ մեղքի աշխարհը մեռած է այլեւս ինծի համար, ինչպէս ես մեռած եմ այդ աշխարհին համար: Կարելորդ մարդուս թլփատուած կամ անթըլփատ ըլլալը չէ, այլ նոր արարած ըլլալը: Թող Աստուծոյ խաղաղութիւնն ու ողորմութիւնը ըլլան բոլոր անոնց հետ՝ որոնք այս սկզբունքին համաձայն կ'ապրին. բոլոր անոնց՝ որոնք իր ընտրեալ ժողովուրդը կը կազմեն:

Այսուհետեւ, խնդրեմ, ոեւէ մէկը աշխարհիկ հոգերով թող զիս չնեղէ, որովհետեւ ես Յիսուսի կը պատկանիմ, ինչպէս մարմնիս վրայ վերքերուն սպիները կը վկայեն:

Եղբայրներ, մեր Տէր Յիսուս Քրիստոսի շնորհքը ձեր բոլորին հետ ըլլայ: Ամէն:

**ՇԱՐՈՒՆԱԿԵԼ
ԸՆԹԵՐՑՄՆՈՒԹԻՒՆԸ
ՄՍՏՈՒՄԾԱՇՈՒՄԸ:**